*Եւ յաւելեալ եղի ի սմա մեկնողաւրէն զցանգ մեծին Եւթաղի եւ զ՟ամ որոշմունս բաժանմանց նորա. զընթե՟րցծ. զ՟գլս, զվկայութ՟ի, զտուն, զնախադրութ՟ի, զվան էրնս Եւ ետու ի ձեռս մանկանց եկեղեցեացդ Հայաստանեայց, ճ՟շտախոհ վ՟դտաց և քաջամիտ աշկ՟տաց։ Զոր եւ ձեզ պարտ է մի կալ և մնալ ի ծուլութ՟ն. այլ ա՟մ կենցաղական հոգոց բարեաւ մընալ ասել և ա՟ծային երանութ՟են արժանի լինել։ Վ՟ս որոյ ուսուցանէ առաւղն իմաստութ՟ն. Երանեալ է այր, որ եգիտ զիմաստութ՟ի և մահկանացու, որ էտես զհանճար։ Եւ դ՟ձլ յաւրէնս ՟տն խորհել ի տըւէ և ի գիշերի† եւ ուսուցանել զճ՟շտ ա՟ծաբանութ՟ին և զլոյս վերին ճառագայթին և 342բ ա՟ծատեսակ և ա՟ծանման առաքինութ՟ն հետևել, | և ը՟ս կամացն ք՟ի և գրելոյ առաքելոյս ընթանալ, առնել և ուսուցանել յայսմ աշխարհի և յետ աստեացս եղանելոյ՝ ընդ ք՟ի թ՟գրել յանձառ ի փառս և յանպատում ի կեանս, ըստ խոստման առաք՟լոյս Պօղ՟սի։*

*Վասն որոյ յերեսս անկեալ պաղատիմ, իբր անքըթիթակամբ, ողորմելի դիմաւք և կողկողագին պաղատանաւք. ա՟ծաբան վարժա՟պտացդ եւ ուսումնասէր ք՟սակեր գրոց ա՟շկտեալ անձանցդ, որք հաւաքեալ ժ՟ղվիք առ սեղանս հոգեւոր և կերակրիք ի կենաց հացէս և յանմահարար բաժակէս, ընթերցմամբ դասի, աւրհնակելով եւ սակս մասին սմին պատահելով, յիշեսջիք և զիմս անպիտանութ՟ի առաջի անմահ գառինն յ՟ի ք՟ի զպխտակ անուն վ՟դպս Թվմա։ Եւ զհոգեւոր և զմարմնաւոր ծնաւղքն մեր*, զՄաթէոս կրաւնաւորն, և զՄ՟փս և զմայրն իմ**։ Եւ զուսուցիչքն մեր և զվարժիչք, զ՟ածաբան վ՟դտքն՝ Զգրիգոր Տաթևացի, Զյոհանէս ա՟ք ուխտիս, Զս՟գիս և զՎ՟դն, Զգ՟րգր Ն՟հտակն Խլաթեցի, Զյ՟կբ ճգն՟ւրն Ղըրիմցի, Զգալ՟ստ Վաղանդնեցի և զ՟ս վ՟դտք այժմեան ժ՟մկիս, որ բ՟զմ երախտիս ունին ի վ(՟ր) մեր և ամ Հայաստանեայց եկ՟ղեցեացս։*

*Եւ մի լինիցիք բազմին առաւղ և սակաւին ոչ տըւաւղ։ Այս է. Ա՟ծ ողորմի ասել մեզ և թողութիւն մեղաց ի տ՟է ա՟յ խնդրել մեզ և մերոցս ամենեցուն։ Եւ ք՟ս ա՟ծ, որ առատէ ի տուրս բարեաց՝ ձեզ տացէ թողութ՟ի մեղաց և արձակումն ի կապանաց։ Եւ ք՟ի ա՟յ մերոյ փառք յաւիտեանս ամէն։*

---

† Առակ. Գ. 13 եւ Սաղմ. Ա. 2

* Մինչեւ այստեղ բաւացի արտագրել է ոմն Մարտիրոս վարդապետ, Թովմայի անուան տեղ իւրը դնելով, № 1598/1575, 334ա.

** Մօր անունը բաց թողած։